ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2026թ. թիվ 516-Ա

Ն.ԲԱՐԻԿՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱԲԼՈ ՏԻՉԻՆԱՅԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2025 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 543-Ա որոշման 1-ին կետը և 2026 թվականի հուլիսի 16-ի թիվ 510-Ա որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Նաիրա Լյովայի Բարիկյանին 2026 թվականի հուլիսի 17-ից ազատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Պաբլո Տիչինայի անվան թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից և լուծել նրա հետ 2025 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Պաբլո Տիչինայի անվան թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Նաիրա Բարիկյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-16 17:28:52 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հուլիսի 16
ք.Վանաձոր